



Կարգայինք սիրով և հաճու-
թեամբ Հայրենիք պատուա-
կան օրագրին թիւ 851, 853,
866 թերթերուն մէջ երեք յօ-
դուածներ, մակագրեալ « Ակնարկ
մը Հ. Քաջունիի Բառգրքին վրայ »,
գրեալ Յովհ. Արթիւնեանէ՝ աշակերտ
Համալսարանի բժշկութեան նանսիի:

Սա յետ գովելոյ մեծապէս գործոյն
Քրդիւնքը, որ պիտի ըլլայ կ'ըսէ « պա-
տուական առաջնորդ մը բոլոր անոնց
որոնք իրեն պիտի հետեին հայ գի-
տութեան զարգացման և ուսումնա-
սիրութեան մէջ », ինչ ինչ քրնագա-
տութիւններ կ'ընէ արդարասէր ոգ-
ւով և գիտութեան փափաքով: Եւ
պատճառ քննադատութեանց են՝ ըստ
մեծի մասին՝ բնական պատմութեան
վերաբերեալ բառերն, որոց ոմանց
ձևերը ոչ ուղղապէս գրուած են՝ իւ-
րաբանչիւրը իր տեղը, և կան բառեր
որ անպատշաճ կ'երևին իրեն:

Յառաջ քան ի մասունս իջնելու կ'ը-
սեմք, թէ Բառգրքիս մէջ ձևերը գըտ-
նել և դնելը յանձնուած էր աշխոյժ
երիտասարդ քահանայի մը, վասն զի
չէր ներեր ժամանակս զբաղիլ այդ-
պիսեզք, և մանաւանդ հեռի ի վանաց
բնակելովս. և միշտ երախտապարտ
եմ՝ նոյն երիտասարդ քահանային
առ իս ըրած ձեռնտուութեան: Բայց
ինչպէս յայտնի է ամենուն, այդպիսի
մեծ գործոյ մը մէջ, որ առաջին ան-
գամ կ'երևէ ազգիս մէջ պատկերա-
զարդ, կրնան վրիպակներ սպրդիլ
կամ՝ անգիտութեամբ և կամ՝ անու-
շագրութեամբ, որոց ոմանց մեկը ալ
ծանօթ եղած եմք յետ տպագրու-

թեան թերթիցն, և զոմանս փոփո-
խեալ:

Բայց այդ ակամայ վրիպակներն,
ինչպէս ուսումնասէր քննադատն իսկ
կ'ըսէ, չեն պակսեցներ գործոյն մեծ
արդիւնքը: Լաւագոյն էր թէ չըլլային.
բայց ըստ առածին, « Լաւագունին
անյազ տենչ՝ — Բառնայ և զլաւն առ ի
մէնջ »: Մենք ուրախ եմք որ ուսու-
մնասէր և գիտուն անձիւք իրենց ու-
ղիղ քննադատութիւններն ընեն գոր-
ծոյս վրայ, որք ապագային կրնան օգ-
տակար լինել:

Իջնանք ի մասունս: Ուղիղ է քննա-
դատին ըսածը, թէ վրիպակաւ գը-
րուած է *Butome* տնկոյն ձևը *Hottonie*
տնկոյն տեղ, *Adonide* ծաղկին ձևը
Anémone ծաղկին տեղ:

Բառգրքիս ձև 204 է ստուգիւ թէյի
ձև, և կը զարմանամ՝ թէ ի՞նչպէս
գրուեր է *Cerisier* բառին մէջ վայրի
բայենայ տեղ:

Գալով *Ers* և *Vesce* բառից քննա-
դատութեան, կ'ըսեմ թէ 402 ձևը
որ գրուած է *Ers* բառին առջև՝ կը
պատկանի բուն *Vesce* բառին, ինչպէս
որ հոն ալ գրուած է նոյն ձևը, բայց
ինչպէս յայտնի կ'երևի, երկուքն ալ
իրարու մերձաւոր են, մինչև Պէշը-
րէլի բառգրքին մէջ ըսուած է *Ers*
տնկոյն համար *Plante légumineuse*
appelée vulgairement Vesce noire.
Ուստի կրնամք բսել Վիզն սեւաւ, Վիզն
վայրի, որոշելու համար բուն վզսնէ
(vesce). ինչպէս *Trèfle Առառչտ*, ու-
ղելով որոշել *Luzerne* լա. *Medicago*
տնկէն, յետինը կոչեր եմ՝ Վայրի ա-
ռառչտ: — *Ers* տնկոյն սովորական

տեսակն է Ռայն (Lentille cultivé. Լս. Ervum lens).

Gaillet, Կրաքնխտ տնկոյն ձևը 486 թուի և ինձ՝ թէ վրիպակաւ դրուած է: Միայն Պարրալի երկրագործական բառգրքին մէջ կը գտնեմք որ կաթնխտտի տերևները են հակադիր, բայց իր տերևակներու (stipule) պատճառաւ կ'երեցնեն զինքը ճառագայթածակ տերևովք (à feuilles verticillées), նման տորոնի (garance) տերևոց, վասն զի կաթնխտտ է ի ցեղէ տորոնեայց (rubiaceés).

Géranion Խորդեմի անուան վրայ այս ինչ կրնամք ըսել թէ խիստ շատ տեսակներ ունի, բայց թէ ձև 500 է Խորդեմի Ռոքերդի, չեմք կրնար ըսել ստուգութեամբ. միայն կը հաստատեմք թէ 501 ձևը դրուած է գլխիվայր:

Germandrée, Լերդախտտ անուան ձև 502 և Giroflée Ծախարակ ձև 506 վրիպակաւ դրուած են, և չեն իրենց սեպհական: Իսկ թէ 506 ձևը է Silène տունկը, չեմք կրնար ըսել ստուգութեամբ: Նոյնպէս վրիպակաւ դրուած է ձև 608 Lierre terrestre կամ Glécome, որ է ձև Hypéricum տընկոյն:

Գանք հիմա օրագրին 853 թերթին մէջ ըրած քննադատութեանց: Կ'ընդունիմ 75 ձևին մէջ Arion Արիոն կենդանւոյն կլոր ծակը յաջակողմ ըլլալը, մինչդեռ ձևին մէջ փորագրած է ի ձախակողմ, որ է իր թղբին բերանը, ուսկից շունչ կ'անու:

Չև 126 վրիպակաւ դրուած է Bellette կենդանւոյն առջև, որ է խոշորք Taupe պատկերը:

Cantharide Կանթար բառին առջև դրուած են 186, 187, 188 ձևերը առնով Լիթիէի Բժշկական բառգրքէն, վասն զի երեքն ալ ունին խաւանիչ հանգամանք, բայց են ստուգիւ երեք զանազան տեսակ պատենաթէն միջատներ. առաջինն ձև 186 է բուն

Կանթար կոչուածը. երկրորդը ձև 187 է Mylabris Միլաբր, երրորդը ձև 188 է Méloé Մեղրած: Վերջին երկուքը շատ անգամ խարդախութեամբ կանթարի տեղ կը գործածուին:

Մեր քննադատին Ոսկի եղնակին (Cétoine doré) և Բնդեռն ծառոց (Hanneton) վրայ ըրած դիտողութիւնը ստոյգ է, բայց դիտմամբ դրուած է 206 ձևը որոյ վրայի միջատն է ոսկի եղնակ, և տակինը բնդեռն ծառոց, ագեւոր: Հարկ համարուած է երկուքն ալ ի միասին գնել, իրարմէ ունեցած տարբերութիւնը իմանալու համար ըստ արտաքին ձևոյն, թէպէտ և դունով և ուրիշ հանգամանքներով բուրովին կը տարբերին իրարմէ: Այս ստոյգ է որ լաւ կ'ըլլար բառգրքին մէջ բացատրել ձևին այս տարբերութիւնը:

Comatule կենդանւոյն համար ըսածը չեմք կրնար հաւատել, նոյնպէս և 283 ձևին ստուգութիւնը. միայն այս կ'ըսեմք որ դրածնիս Պեշըրէի բառգրքին վարդապետութիւնն է, ուսկից առած եմք:

Ծիտակ է քննադատին ըսածը, թէ ձև 363 պատշաճի Homard Աստակոսի և ոչ Écrevisse Խեցգետնոյ. թէպէտ իրարու նման կենդանիք են, վերջնոյն մկրտանիւրը են հաւասարաչափ և ոչ սղոցաձև. մինչդեռ Աստակոսի են սղոցաձև, և տակինը փոքր քան զվերինն:

Գալով Ganglion բառին կ'ըսեմք, թէ պէտք է կոչել պարզաբար Հանգոյց կամ Կճիկ, և ոչ Հանգոյց չղաց. որովհետեւ են հանգոյցք չղայիկք և հանգոյցք աշղայիկք, իրարմէ զատ:

Հուսկ ուրեմն գանք պատասխանել 866 թուոյն մէջ ըրած քննադատութեանց, զորս չեմք գտներ հիմնական և արդարացի, այլ գրուած ըստ իւրումն ըմբռնման, որուն համար կ'ըսէ և քննադատն իսկ, թէ « գուցէ ոչ

գիտական պաշարս կը բաւէ և ոչ ուսանողի ժամանակս »:

Կը բաւ թէ բառգրքիս գէթ բնագատմական մասը Քիւլփիէի ժամանակակից գրքերէն ներշնչուած է գողցես, և ոչ այժմեան մանրագիտին և նշգրակին ըրած գիւտերուն համեմատ: Կը սխալի մեծապէս, վասն զի ինչպէս յառաջբանին մէջ ըսած եմք, թէ գործոյս առաջնորդ առած եմ Պուլլիէի Գիտութեանց և Արուեստից և գեղեցիկ դպրութեանց Բառգիրքը, բայց այժե անցուցիր եմք նաև Պարբայի նորատիպ քառահատոր երկրագործական բառգիրքը, ուր բուսոց և կենդանեաց կարևորներուն վրայ կը խօսի ընդարձակօքէն: Հարկաւ Բառգիրքս բնական պատմութեան հարկաւոր մասերը բովանդակելով հանդերձ, պիտի ունենայ իր համառօտութիւնը, և ոչ երկայնօրէն և մանրաքնին վարդապետել, որ կը պատշաճի բնական պատմութեան գրուածքի մը:

Կ'ը բաւ քննադատը « թէ ճիգ մը կը նկատուի բոյսերու և կենդանիներու անուններու հայացուցման »: Այդ ստոյգ է, և յայդմ է գործոյս մեծ պարծանքը, որ ջանացեր եմ ըստ նախնեաց, բառերուն նշանակութեան համեմատ, որ ըստ մեծի մասին յունարէնէ կամ լատինէ ածանցեալ են, հայացնել: Մեր քննադատին ականջին խորթ կու գայ Vanille բառը Համեմուկ կոչելը, որ ընդունելի եղած է ազգին, և ոչ վանիլ ըստ քմաց իւրոց. դարձեալ խորթ կուգայ մեր քրն-

նադատի ականջին Ոսկետունկ (այլթընքէգրե) Ipécacuanha, զոր մեք յարմար ցուցած եմք, Ոսկեծաղիկ (Chrysanthème), Ոսկեէղէգն (Lusimague), զոր ունիմք ի նախնեաց: Մեք չունիմք ի շխանութիւն՝ այն բառերը որք կան ի նախնեաց՝ Ընջել, և եւրոպական անունները անոնց տեղ փոխանակել:

Չեմք հակառակիք Epilobe բոյսը կոչել Եպիլոբ քան Ծրաղկոզրի, որ կը պատկանի եպիլոբին մէկ տեսակին:

Վերջ տալով խօսքիս կ'ընեմ, թէ կան և հիմա ազգին մէջ նորուս պատանիներ, եւրոպական գիտութեանց հետամուտ, բայց սակաւ հմուտ ազգային լեզուի և մեր նախնեաց գրուածոց, որք կ'ուզեն եւրոպական բառերը գործածել, անգէտ հայերէն անուանց գողով, ինչպէս Cétérach տունկը անուանել Սեղբաք, որ ծաղու արժանի թուի մեզ:

Մեք ջանացած եմք այն բառերը որ գտողին կամ տեղւոյն անուամբ կոչուած են, նոյնը պահել հայերէնի մէջ տառադարձութեամբ, իսկ միւս գիտական բառերը որ նշանակութիւն մը ունին յունէ ածանցմամբ, թարգմանաբար կազմել, և աննշանական բառերը յարմարցնել ըստ պատշաճի որչափ կարելի է, երբ չեմք գտած ի նախնեաց բառ մը համանշանակ, և կամ յարմար բառ մը յայլոց յօրինեալ:

Հերիքացիլ այս համառօտ գրութիւնս ի պատասխանի երեք յօդուածոց Յովհ. Արթիւնեանի, ուսումնասէր պատանւոյն:

Հ. Մ. Քաչուսի

